

«ԻՃԱՐԱՐ ԶԱՐՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ»

(ՈՐ ԶԱՐԵՆՅՈՋ ԹՔԻՒ ՎՐԱՆ)

Ընդհանուր.— Զարեհնցը պրիզմա մըն է, կախուած հայ գրականութեան վրայ: Արեւեան կողմէն գիտես ճանճարս կ'երեւայ քեզի, արեւմտեան կողմէն նայիս՝ քանջարս կը տեսնես, հիւսիսէն՝ ձիւածանո, «վարդ», «կոյս», հարաւէն՝ «թուք», «խլիւք», «մէզ»: Ինքը Հոկտեմբերի երգիչն է. այդ պատճառով «թքեր» է բոլոր Սեպտեմբերի գրածներուն վրայ:

Վալուտա.— Ինչպէս պետութիւն մը իրաւունք չունի իր ունեցած ոսկիէն աւելի թղթադրամ բաց թողնելու՝ անանկ ալ անհատ մը չի կրնար ուզածին չափ անխմաստ խօսքեր ընալիլ՝ առանց դիմացը իրական արժէք մը դրած ըլլալու: Եւքսպիրը, որ 42 տարի իմաստուն բաներ է գրեր, իրաւունք ունէր նոյնքան սուրի ալ յիմար բաներ գրելու: (Ուրիշ բան է, որ չէ ուղեր իր յիմարութեան իրաւունքէն օգտուիլ):

Զարեհնցը անցելոյն մէջ 7 պրակ շնորհալի բաներ է գրեր. դիմացն ունի 5 անշնորհք պրակներ: Դեռ երկու պրակ գրելու տեղ ունի:

Հայնոյանէր կանխիկ.— Խիստ սաղլամ գործ է բռնել Զարեհնցը: Ուրիշ հեղինակներու նման օրերով — շաբաթներով չի բերեր տանիլ իր քննադատներուն՝ պզտիկ հայհոյանք մը տալու համար:

Անիկա նախ քննադատին կը հայհոյէ՝ յետոյ կուգայ գիրքը քննադատելու:

Եստ վաճառատանց դրան կարգացնր եմ ապառիկ ոչ ոքիս, բայց քիչ վաճառական տեսեր եմ Զարեհնցի նման գրած սկզբունքին հետեւող: Ըստ Զարեհնցի, այն մարդը, որ իր ըրածները չ'հաւանիր՝ «էջ» է, իսկ այն էլը որ իր պոէմները կը մեծարէ «մարդ» է: Փառք տանք Ամենակալին, որ տակաւին էջերը զլիւի չեն ընկեր. ապա թէ ոչ աշխարհիս բոլոր աւանակները պահանջուած յարգանքի տուրքը ձգելով Զարեհնցի փառասիրութեան գանձարկղը՝ մարդոց շարքերը պիտի լցուէին:

Կը բացապանչեմ — ինչո՞ւ, ճանըմ, բանաստեղծութեան մը հաւանելու կամ չհաւանելու պատճառով կենդանական ազնիւ քեղ մը վերանայ երկրիս երեսէն:

Հարցապնդում.— Զարեհնցի հայ գրականութեան մէջ բերած նորութիւններէն գլխաւորներն են՝ «թուք», «խլիւք», «մէզ», «ոջիլ», «կապուղ միս» և «կոնք» — բաներ մը՝ որ Ե-

րեւանի ո՛ր ետ ընկած փողոցին մէջ ալ լեցուած ըլլան, սանխտարական վարչութիւնը սայլակները կը դրկէ դուրս թափելու համար: Ինչո՞ւ կը յապաղի վարչութիւնը և իր սայլակները տակաւին չեն երեւցած հայ գրականութեան դռներուն առաջ, ուր այս բաները տպուած են ցերեկով:

Ամուրիս ու պսակուածը.— Տէրեանին ուրուականը Զարեհնցին գալով այսպէս խօսեցաւ.— Ինչո՞ւ կը թըքնես իմ գրքերի վրայ: «Յնորք» երգելը այդքան զէ՛շ բան է եղեր: Գուն «կապուղ միս» ու կոնք կ'երգես, վասընզի ամուսնացած ես: Զէ՞ որ ամուրի ատենդ ինծի նման ես երգեր: Գուն կ'ըսես պէտք է գրել՝

«Յնորք» է:
Կը գամ
Մկանոս
Եւ
Երբ ես հանուի
Գիտեմ
Կը զգամ ձկան հոս»:

Այդ շատ լաւ կը խօսիս, բայց բանն այն էր, որ այն աղջիկը որուն ես կը սիրէի, երբ հանուէր, զուռը կը կողպէր ու չէր թողուր որ երթայի «ձկան հոս» առնէի իրմէ: Ես ալ ստիպուած դրան վրայ «ցնորք» կ'երգէի: Հասակիս հետ կապուած թերութիւն մը չե՞ս ներքը ինծի, ապերախտ:

Դաժան անգլութիւն.— Գարնան առաւօտ էր: Փողոցէն անցած ատենս նկատեցի շարան մը «մեջլաններ» ամուսնեքրը թաշկինակով կապած կ'երթային: Իմ հարցիս թէ ի՞նչ է պատահեր պատասխանեցին ցաւալի տքալով:

— Անմեղ կ'երթայինք, Զարեհնցը մեզի կանչեց թէ՛

«Ուզո՞ւմ եմ կամպոս կամ չիր, կամպոսը փոխարեմ
Խօսր ձեր
Կապուղ ծնօթիմ մօթիկ
«Թող օայտ երգերիս դամպին»...»

Ու սկսեց հարուածնլ:

— Վայ անգութ մարդ: Յայտնե՛՛նք ոստիկանատուն:

— Այո: Բանաստեղծները արտօնուած են եղեր ուզածին ընելու:

— Իրա՞ւ: Անանկ է նէ փախէ՛ք: Աղէկ որ չէ սպաներ ձեզի:

«Հին» ու «մոռ» Զարեհնց.— Երբ Զարեհնցը «նոր ուղղութեան» հետ նստած խրախճանք կ'ընէր, իր հին պոէմները սեւեր հագած ներս մտան ու այսպէս ըսին.

— Ես՛, տուր մեզի Զարեհնց անունը, այդ անունը մեզմով առիր, մեզի կը պատկանի: Մեզի դէն ես «թքեր», մենք ինչպէս ապրինք անանուն: Եթէ մէկը հարցնէ թէ «որո՞ւ պոէմներն էք», ի՞նչ պատասխանենք...»
ԼԵՌ-ԿԱՄՍԱՐ